

Ազգային

ԼՂ. ՏԱՐԻ ԹԻՒ 1999 ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 7 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2015
• VOL. XXXVI, NO 1999 • LUNDI, 7 SEPTEMBRE 2015 • MONDAY, SEPTEMBER 7, 2015

1915-2015
ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
100-ՐԿ ՏԱՐԵՎԱՐԶ



ԿԸ ՅԻՇԵՄ ԵՒ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՄ

Նախագահ Սահակեան կարելու կը համարէ ԵԿՄ-ի կողմէ դեպի Արցախ կազմակերպուող ուխտագնացութիւնները

ԼՂՆ նախագահ Բակո Սահակեան Օգոստոս 27-ին Հաղորդի շրջանի Արա լեռ կոչուող տեղամասին մէջ մասնակցած է Երկրապահ կամաւորականներու միութեան կողմէն աւանդական ուխտագնացութեան ծիրէն ներս կազմակերպուած տօնական ձեռնարկին: Այս մասին կը հաղորդէ ԼՂՆ նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան գլխաւոր վարչուիւնը:



Նախագահ Սահակեան արժեւորած է Երկրապահ կամաւորականներու միութեան կողմէ կազմակերպուող ամենամեայ ուխտագնացութիւնները՝ ընդգծելով անոնց կարելորութիւնը մատաղ սերունդի հայեցի դաստիարակութեան, բանակ-հասարակութիւն կապերու եւ ազգային միասնութեան ամրապնդման տեսանկիւններէն:

Ձեռնարկին մասնակցած են ԼՂՆ պաշտպանութեան Նախարար Լեւոն Մնացականեան, Երկրապահ կամաւորականներու միութեան Նախագահ Մանուէլ Գրիգորեան, պաշտօնատար այլ անձինք:

Չախարովա. «Ռուսիա ամենայն պատասխանատուութեամբ կը մօտենայ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակին մէջ իր պարտաւորութիւններուն»



«Ռուսական կողմը ամենայն պատասխանատուութեամբ կը մօտենայ դարաբաղեան տագնապի խաղաղ լուծման հարցի ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակին մէջ ստանձնած իր պարտաւորութիւններուն», Հինգշաբթի՝ 27 Օգոստոսին, տեղի ունեցած զրոյցի մը ընթացքին յայտարարեց Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան ներկայացուցիչ Մարիա Չախարովա:

«Յոյսով ենք, որ Ռուսիոյ տարակարծութիւնները կարգ մը երկիրներու միջեւ, որոնք ոչ մեր պատճառով կը ծագին, չանդրադառնայ Մինսքի խմբակի աշխատանքներուն վրայ: Մեր կողմէ որեւէ խոչընդոտ, հարց կամ խնդիր չի կրնար ըլլալ: Մենք այդ ձեւաչափին մասնակից ենք եւ մեծ պատասխանատուութեամբ կը մօտենանք մեր պարտաւորութիւններուն, որովհետեւ կը հասկնանք, թէ որքան լուրջ է այդ խմբակին օրակարգին վրայ գտնուող թեման», նշած է Չախարովա:

Շարմազանով. «Քննարկումն է լաւագոյն ճամբան՝ ճշմարտութեան հասնելու»

Հայաստանի Հանրապետական կուսակցութեան Գերագոյն մարմինի նիստին ընթացքին Հինգշաբթի՝ 27 Օգոստոսին, քննարկուած են ներթափառական խնդիրներ, յատկապէս՝ օրակարգի հիմնական հարցը՝ սահմանադրական բարեփոխումներու հանրաքուէն: Այդ մասին Գերագոյն մարմինի նիստէն ետք լրագրողներուն ըսաւ Հանրապետական կուսակցութեան մամուլի բանբեր, Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանով: Ան նշեց, որ նախագահ Սերժ Սարգսեան նիստին ընթացքին ներկայացուցած է իր հանդիպումներուն ընթացքը տարբեր քաղաքական ուժերուն հետ, որմէ կարելի է հետեւցնել, թէ նախագիծին շուրջ փոխըմբռնում գոյութիւն ունի:



Պատասխանելով Լրագրողներու այն հարցումին, թէ երկու ընդդիմադիր կուսակցութիւն փաստօրէն չեն մասնակցիր այդ քննարկումներուն, ան նշեց, որ իւրաքանչիւր քաղաքական ուժ ինք կ'որոշէ մասնակցիլ քննարկումներուն, կամ ոչ, իսկ տեսակետներու տարբերութիւններն ու քննադատութիւնը բնական են:

«Մենք մենտիրական պետութիւն չենք, մենք ժողովրդավար պետութիւն ենք, ուր բազմակարծութիւնը բնական երեւոյթ է: Մենք աւետարան գրող չենք: Կրնան սխալներ ըլլալ: Իսկ եթէ ուժ մը կը մերժէ քննարկումը, կը վերածուի ոչ թէ քաղաքական ուժի, այլ քմայթոտ երեխայի: Այս մէկը տակաւին վերջնական չէ, քննարկումները տակաւին պիտի շարունակուին, անկախ պատգամաւորներու հետ հանդիպումներ տեղի պիտի ունենան: Քննարկումն է լաւագոյն ճամբան՝ ճշմարտութեան հասնելու», ըսած է Շարմազանով:

Հայկական բանակը յաջողած է ետ մղել թշնամիին խոտորեցնող ներթափանցման փորձը

Ուրբաթ՝ 28 Օգոստոս 2015-ին, ժամը 01.40-ի սահմաններուն, դարաբաղա-ատրպէյճանական հակամարտ գործերու սահմանագծի արեւելեան ուղղութեամբ՝ հակառակորդը ձեռնարկած է հետախուզախոտորեցնող ներթափանցման հերթական փորձը:



ԼՂՆ ՊՆ մամուլի ծառայութեան տեղեկութիւններով՝ ՊԲ յառաջապահ ստորաբաժանումները ժամանակին հաւաստանշած են ատրպէյճանական զինուժի 20-25 հոգիէ բաղկացած յատուկ ջոկատայիններուն յառաջխաղացումը եւ կորուստներ պատճառելով՝ ետ շարտած իրենց ելման դիր-

քերը: Ծաւալած մարտերուն ընթացքին հայկական կողմը կորուստներ չէ ունեցած: Նոյն աղբիւրը նշած է, որ 27-էն 28 Օգոստոս լուսցող գիշերը ատրպէյճանական կողմը տարբեր զինատեսակներով զինադադարի պահպանման դրութիւնը

խախտած է մօտաւորապէս 110 անգամ՝ արձակելով աւելի քան 2000 կրակոց: Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան նախարարութիւնը կը հաստատէ, որ հայկական ուժերը պիտի շարունակեն իրենց վստահած առաքելութիւն կատարել:

Հրանդ Մելիք Շահնագարեան. «Պաքու խիստ անմխիթար կացութեան մէջ կրնայ յայտնուիլ»

Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութիւնը հետզհետէ կը յայտնուի շրջափակման մէջ: Այս մասին իր տեսակետները փոխանցեց քաղաքական վերլուծաբան Հրանդ Մելիք Շահնագարեան: Հայ-ատրպէյճանական հակամարտութեան զինեալ բախումի հաւանական վերսկսելու հեռանկարը լուրջ սպառնալիք է Ատրպէյճանի համար:

Ըստ Շահնագարեանին, Պաքուի մէջ գիտեն, որ Հայաստան ու Արցախի դեմ յարձակման պարագային Հայաստան զինուորական լուրջ գործողութիւններ կրնայ իրականացնել Նախիջեւանի ուղղութեամբ:

Վերջին երկու տարիներու ընթացքին հայկական բանակը զգալիօրէն բարելաւած է մարտական դիրքերը Նախիջեւանի հետ սահմանին վրայ: Եթէ այդ կացութեան վրայ գումարները նաեւ քրտական հարցի գործօնը՝ թուրք-ատրպէյճանական նախիջեւանեան սահմանին վրայ, ապա Պաքու խիստ անմխիթար կացութեան մէջ կրնայ յայտնուիլ, հաստատեց Հրանդ Մելիք Շահնագարեան:

Սիրիահայերը Պատերազմի Որոգայթուն

ԵՐՈՒԱՆԳ ԱԶԱՏԵԱՆ

Պատերազմը Սիրիայում արագորեն թեժանում է Թուրքիայի սխալ հաշուարկների ու նաեւ խորամանկության հետեւանքով: Թուրքիայի նախագահ Ռեճեպ Թայյիպ Էրտողանը անելանելի կացության մեջ է գտնուում՝ իր ներքին քաղաքականության եւ քրտական խնդիրը «ժողովրդավարական ձեւով» լուծելու իր ծրագրերի պատճառով: Այդ նպատակին հասնելու համար նա ժամանակին բանակցությունների մեջ մտաբերական ընդդիմության զինուորական թելի դեկավարների եւ անձամբ PKK կազմակերպության բանտարկուած առաջնորդ Ապտուլլա Օճալանի հետ: Ոչ միայն քրտական փոքրամասնության հանդեպ կիրառուած սահմանափակումները մեղմացան, այլեւ քիւրտերին իրաւունք տրուեց բացայայտօրէն մասնակցելու խորհրդարանական ընտրութիւններին, որի արդիւնքում նրանք կարողացան վաստակել ձայների 13 տոկոսը: Դա նշանակում էր 80 պատգամաւոր ունենալ խորհրդարանում: Քրտական ժողովրդա-դեմոկրատական ձախակողմեան կուսակցութեան (HDP) առաջնորդ Սելահատին Տեմիրթաշը դրական դեր էր ունեցել խաղաղ բանակցութիւնների գործընթացում, այդ պատճառով էլ նրա անձնական ժողովրդականութիւնը թռիչք էր ապրել Թուրքիայում: Երբ Օճալանը PKK մարտիկներին հրամայեց ցած դնել իրենց զենքերը, քրտերից շատերը, նաեւ արտասահմանեան դիտորդները, կասկածանքով վերաբերուեցին Էրտողանի կառավարութեան իրական մտադրութիւններին: Թուրքական Յանրապետութեան հռչակումից ի վեր, երկիրը մի քանի անգամ անցել էր ազատութեան եւ լարուածութեան թուլացման ժամանակաշրջաններ, որոնց միշտ էլ հետեւել էին զինուորական յեղաշրջումներն ու արիւնոտ հետապնդումները:

Թերահաւատների մտավախութիւնները իրականութիւն դարձան, երբ Էրտողանը խուճապի մատնուեց եւ վերանայեց քրտերի հանդեպ որդեգրած իր քաղաքականութիւնը: Նա պատերազմ սանձազերծեծ PKK -ի մարտիկների դէմ Իրաքում եւ Թուրքիայում: Թուրքիայի քրտերի հաստատակամութեանը գումարուեց Քոպանիում (Սիրիա) Մ. Նահանգների եւ դաշնակից զօրքերի աջակցութեամբ ստեղծուած քրտական քանթոնը:

Սիրիայում եւ Իրաքում ապրող քրտերը ապացուցեցին, որ իրենք Իսլամական պետութեան դէմ պայքարող ամենաարդիւնաւետ զօրամիաւորումներն են, եւ նրանք արժանացան դաշնակիցների վստահութեանը: Նման զարգացումները առաջ բերեցին Թուրքիայի սահմանում ինքնավար քրտական երկրամաս ստեղծելու հեռանկարը, ինչը զայրացրեց Էրտողանին:

«Մենք ոչ մի դէպքում թոյլ չենք տալու Սիրիայում, մեր սահմանին մօտ, մի նոր պետութեան ստեղծումը», յայտարարեց նա, ակնարկելով դեռ սաղմային վիճակում գտնուող այդ պետութեան մասին:

Էրտողանի սկզբունքայնութիւնը խոչընդոտեց Մ.



Տեր Զօրի աւերուած ռմբահարուած Սրբոց Նահատակաց հայկական եկեղեցին

Նահանգների քաղաքականութեանը Սիրիայում: Թուրքիան արգելել էր Ինճիրլիքի ռազմակայանը օգտագործել՝ ռմբակոծելու համար Իրաքում եւ Սիրիայում «Իսլամական պետութեան» դիրքերը: Նախագահ Օպաման յուսահատ ելքեր էր փնտռում Սիրիայում՝ Մ. Նահանգների քաղաքականութիւնը փրկելու համար: Ի վերջոյ նա գտաւ այն Էրտողանի արտասանած ստիկամ երկիմաստութեան մեջ: Մ. Նահանգներին թոյլատրուելու էր օգտուել Ինճիրլիքի ռազմակայանից, եւ Թուրքիան էլ միանալու էր «Իսլամական պետութեան» դէմ մղուող պայքարին, եթէ Անքարային թոյլատրուէր իրականացնել՝ Սիրիայում անվտանգութեան գօտի ստեղծելու երկար սպասուած ծրագիրը: Օպաման համաձայնուեց եւ ՆԱԹՕ-ի դաշնակիցները դժգոհութեամբ բուէարկեցին Թուրքիային նեցուկ կանգնելու օգտին՝ իմանալով Էրտողանի ծրագրի երկսայր լինելու հանգամանքը: Թուրքիան սկսեց իր հրթիռակոծումները Սիրիայում եւ Իրաքում, բայց գլխաւոր թիրախները քիւրտերն էին եւ PKK-ի մարտիկները, այսինքն այն ուժերը, որոնք կարողացել էին Իսլամական պետութեան առաջխաղացումները կանգնեցնել Իրաքում եւ Սիրիայում: Արջի ծառայութիւն մատուցելով ISIS-ի (Իսլամական պետութեան) դէմ արշաւին, Թուրքիայի վերջնականատակն էր ոչնչացնել իր սահմաններին գտնուող քրտական քաղաքները:

«Ինտիփենտընթ» թերթի պլոգում, Փաթրիք Քոգպըրը գրում է, որ «Անքարայի նպատակը ճիշդ հակառակն է Ուաշինկթընի նպատակին եւ քիչ է տարբերուում ISIS-ի նպատակից, որը փորձում է յետ պահել քրտերին»:

Թուրքիան պատերազմի մեջ պատերազմ է սանձազերծել:

Միակողմանի պատերազմ ընդդէմ Թուրքիայում եւ հարեւան երկրներում ապրող քրտերի: Գերմանական «Շպիկըլ» թերթին տուած հարցազրոյցում քիւրտ առաջնորդ Տեմիրթաշը ասել է, որ «Էրտողանը ընդունակ է երկիրը կրակի տալու»:

Էրտողանը վտանգաւոր քայլի է դիմում, քիւրտերի Շար. էջ 12

Նախագահ Բակո Սահակեան այցելած է հիւսիսային զօրամասեր

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեան 26 Օգոստոսին այցելած է Հանրապետութեան հիւսիսային հատուածին մեջ տեղակայուած շարք մը զօրամասեր:

Նախագահ Սահակեան ծանօթացած է ծառայութեան ընթացքին եւ պայմաններուն, նաեւ՝ զինուորներուն առօրեային:

Երկրին ղեկավարը ընդգծած է, որ պաշտպանութեան բանակի մարտունակութեան հետեւողական բարձրացումը, նոր ռազմատեսականիով համալրումը միշտ ալ եղած են ու կը մնան պետութեան կարելորագոյն առաջադրանքներէն, այդ առումով ալ ամեն ինչ կը կատարուի այս ուղղութեամբ:

Նախագահին կ'ընկերակցէին պաշտպանութեան նախարար Լեւոն Մնացականեան, պաշտօնատար այլ անձեր:



The Office of the NKR President V.D.

Օգտեմիր. «Թուրքիոյ մեջ իբրեւ ալաուի ապրող մէկ միլիոն ծպտեալ հայ կայ»

ԵՐԵՎԱՆ, «ԷՐՄԵՆԻԿԱԿԵՐ». - Թուրքմեն-ալաուիական «Պեթթաշի» հիմնադրամի նախագահ Օգտեմիր, «Քանալիապեր» լրատուական կայքին հետ կայացած հարցազրոյցի մը ընթացքին յայտարարած է, թէ Թուրքիոյ ցոյցերուն մասնակցող եւ իրենք զիրենք ալաուի ներկայացնողները բոլորն ալ ծպտեալ հայեր են:

Շաբաթ, Օգոստոս 15ին հրապարակուած հարցազրոյցին մեջ Օգտեմիր կը յայտնէ նաեւ, որ նշեալ մէկ միլիոն ալաուի ծըպտեալ հայերը կը համագործակցին կիւլենականներուն հետ՝ ի վնաս թրքական պետութեան:

Օգտեմիր կը պնդէ նաեւ, որ վերջերս Թուրքիոյ մեջ քիւրտիստանի բանուորական կուսակցութեան զինեալներուն միացող եւ իրենք զիրենք ալաուի կոչող անձերը եւս ծպտեալ հայեր են:

ԱԶԱԿԱՅ
Շաբաթաթերթ

ABAKA

Hebdomadaire Arménien
Armenian Weekly ISSN 0382-9251

Publié par /Published by
Le Centre de Publication Tékéyan
825 rue Manoogian, Saint-Laurent,
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162
e-mail: abaka@bellnet.ca
www.tekeyanmontreal.ca

Պատասխանատու խմբագիր՝
ԱԼԵՏԻՍ ՊԱԳԳԱԼԵԱՆ

Ծանուցումներու,
նուիրատուութիւններու եւ
գրասենեակի պատասխանատու՝
ՍԱԼԻԻ ՄԱՐԿՈՍԵԱՆ

Թորոնթոյի պատասխանատու՝
ՄԱՏԱԹ Բ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Canada
2nd Class \$80 (QC & ON)
1ère classe/first class \$90
U.S.A. 1st class (US)\$90
Autres pays/Other countries:
1st class (US)\$120
Per issue \$1.75

Dépôt légal: Bibliothèque du Québec

PM40015549R10945

TPS/GST - R119209294 • TVQ/PST #1006268699

“We acknowledge the financial support of the Government of Canada through the Canada Periodical Fund (CPF) for our publishing activities.”

Գանատահայոց Առաջնորդը հանդիպում մը ունեցաւ Լավալի քաղաքապետ՝ Նորին Զաւատարմութիւն Մարգ Տէմերսի հետ

Երկուշաբթի՝ 24 Օգոստոս 2015-ին, Գանատահայոց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեան, հանդիպում մը ունեցաւ Լավալի քաղաքապետ՝ Նորին Զաւատարմութիւն Մարգ Տէմերսի հետ: Սոյն հանդիպման ներկայ էին նաեւ՝ Քաղաքապետարանի խորհրդականներ՝ Պրն. Բաւլօ Կալաթի, Պրն. Ռէյ Խալիլ, Պրն. Վասիլօս Զարիտօկեանիս:

Հանդիպման ընթացքին, քաղաքապետն ու Առաջնորդը մեծարեցին Լավալի Հայութեան գործօն մասնակցութիւնը տեղական ինքնավարութեան զանազան նախաձեռնութիւններուն մէջ, մասնաւորաբար՝ Եկեղեցւոյ եւ



համայնքի կեանքէն ներս: Այնուհետեւ, Առաջնորդն ու քաղաքապետը փոխանակեցին խորհրդանշական նուէրներ, որմէ ետք, Առաջնորդ Սրբազանը հրաւիրուեցաւ իր պատգամը արձանագրելու Քաղաքապետարանի Ոսկեայ Գրքին մէջ:

Քաղաքապետի այս այցելութեան Առաջնորդ Սրբազան Զօր կ'ընկերակցէին.

Արժ. Տ. Կոմիտաս Քիւյ. Միրզախանեան, Հոգեւոր հովիւ Լավալի Ս. Խաչ Եկեղեցւոյ

Պրն. Ժագ Սերայտարեան, Թեմական Խորհուրդի անդամ

Պրն. Վահագն Արաբեան, Ատենապետ Լավալի Ծխական Խորհրդի

Պրն. Վիգէն Տարագճեան, Նախկին Ատենապետ՝ Լավալի Ծխական Խորհրդի

Պրն. Լեւոն Իսախանեան, Առաջնորդարանի Դիւանապետ:

Մամլոյ Դիւան



Առաջնորդ Սրբազան Զայրը այցելեց «Արարատ» ճամբարը

Օգոստոս 19-21, 2015 Առաջնորդ Գերշ. Տ. Աբգար Եպիսկոպոս Յովակիմեան, ընկերակցութեամբ Թեմի հոգեւորականներու, այցելեց Ամեյիազպուրկ, Օնթարիոյի «Արարատ» ամառնային ճամբարը, որ կը պատկանի Առաջնորդութեան: Ճամբարի 120 մասնակիցները եւ հսկիչները եկած Թորոնթօյէն (70), Միսսիսսոկայ/Օքվիլէն (16), Մոնթրէալ/Լավալէն (15) եւ Օթթաուայէն (1) կ'անցընեն կրօնական դաստիարակութեան, Հայկական ազգային աւանդութիւններու՝ պատմութիւն, երգ, պար, խաղեր եւ այլ գործունեութիւններու անմոռանալի շաբաթ մը, առաջնորդութեամբ ճամբարի հոգեւորական՝ Արժ. Տ. Միւռոն Քիւյ. Սարգիսեանի, Արարատ ճամբարի Գործադիր Տնօրէնուհի՝ Տիկին Անի Ալթունեանի, ճամբարի Տնօրէն՝ Տիկին Անի Քիւրքճեանի եւ խումբ մը անձնուէր կամաւորներու:

Ճամբարի հինգ մասնակիցներ Սուրիայէն նոր ժամանած գաղթականներ էին, որոնք կը մասնակցէին շնորհիւ Գանատահայոց Թեմի օժանդակութեան եւ «Հայ Տուն» Հետախուզման Ծառայութեան օգնութեան:



Արարատ ճամբարի 2015-ի նշաւաբան ընտրուած էր «Կը յիշեմ եւ կը պահանջեմ» բնաբանը, ոգեկոչելու համար Հայոց Յեղասպանութեան Հարիւրամեակը:

Օգոստոս 20-ին ճամբարի մասնակիցները պատեհուութիւնը ունեցան հանդիպելու Թորոնթօյի Ս. Երրորդութիւն Հայոց. Եկեղեցւոյ Հոգեւոր

Հովիւ՝ Արժ. Տ. Չարեհ Աւագ Քիւյ. Չարգարեանի, Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Վազգէն Քիւյ. Պոյաճեանի, Լավալի Ս. Խաչ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Կոմիտաս Քիւյ. Միրզախանեանի, ինչպէս նաեւ Թեմական Խորհուրդի աշխարհական անդամներու, որոնք

ճամբար եկած էին հանդիպելու ճամբարի մասնակիցներուն եւ մասնակցելու հոգեւորականներու ու Թեմական Խորհուրդի ժողովներու:

Յաւելեալ տեղեկութիւններու համար հաճեցէք այցելել «Արարատ ճամբար»ի կայքէջը՝ <http://www.campararat.ca/>

Նախագահ Սարգսեան բարձր գնահատած է Վենետիկի յանձնաժողովին օժանդակութիւնը

«Արմէնփրէս» կը հաղորդէ, թէ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան 24 Օգոստոսին ընդունած է «Ժողովրդավարութիւն» իրաւունքի միջոցով՝ Եւրոպական յանձնաժողովի (Վենետիկի յանձնաժողով) ներկայացուցիչները:

Նախագահ Սերժ Սարգսեան շնորհակալութիւն յայտնած է Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան փոփոխութիւններու նախագիծի մշակման հոլովոյթին մէջ միջազգային այս հեղինակաւոր կառոյցին ցուցաբերած բարձրորակ մասնագիտական օժանդակութեան համար՝ կարեւոր նկատելով ատիկա

Հայաստանի մէջ տեղի ունեցող իրաւական բարեփոխումներուն իմաստով:

Հանդիպումին ընթացքին շեշտուած է, որ քննարկուող նախագիծին առնչութեամբ սկզբունքային տարակարծութիւններ չկան: Միտքեր փոխանակուած են ժամանակակից սահմանադրական զարգացումներու, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան փոփոխութիւններու նախագիծին մէջ տեղ գտած ժողովրդավարական նորամուտութիւններուն առնչութեամբ:



Անկախութեան հռչակագիրի ընդունման 25-ամեակին առիթով՝ Գալուստ Սահակեան հանդես եկաւ շնորհաւորական ուղերձով

Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակեան շնորհաւորական ուղերձ հրապարակած է Անկախութեան հռչակագիրի ընդունման 25-ամեակին առիթով:

«Հռչակագիրը առաջին իրաւական հիմնաքարն էր հայոց խորհրդարանի նորօրեայ պատմութեան մէջ: Այսօր ալ բարձրագոյն օրէնսդիր իշխանութիւնը իր սահմանադրական գործառնություններով հետեւողականօրէն կը շարունակէ իրականացնել անկախութեան հռչակագիրի դրոյթները, հռչակագիր, որ քառորդ դարեայ՝ երբեք հեռու չթողացող տարածութեան վրայ ալ կ'առաջնորդէ մեզ, կը պարտաւորեցնէ երբեք չդադրիլ լաւատեսութեամբ յառաջ նայիլ եւ հաստատակամօրէն յառաջ շարժիլ, այլապէս այսօրը կրնայ անյուսակի թուիլ, իսկ վաղը՝ անհասանելի ըլլալ: Մենք պարտաւոր ենք լաւատես ըլլալ եւ



այդ լաւատեսութիւնը լիցքաւորել շօշափելի քայլերով, տեսանելի յաջողութիւններով եւ մեզ միշտ հասանելի յաղթանակներով», Ազգային ժողովի հասարակութեան եւ տեղեկատուութեան միջոցներու հետ կապերու վարչութեան հրապարակած ուղերձին մէջ մասնաւորապէս ըսած է Գալուստ Սահակեան:

Հայոց Յեղասպանութիւնը պետք է ոչ միայն ճանչցուի, այլ անոր ժխտումը պետք է քրեօրէն պատժուի

Պուլէնոս Այրեսի մէջ Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարեկիցին նուիրուած միջազգային գիտաժողովին վերջին օրը ելոյթ ունեցած են յայտնի ցեղասպանագետներ:

Գիտաժողովին ելոյթ ունեցած են Յեղասպանագետներու միջազգային ընկերակցութեան նախկին նախագահ, ցեղասպանագետ Դանիէլ Ֆիերշոյէնը, որ կարեւոր համարած է ցեղասպանութիւններու ուսումնասիրումը զանոնք յետագային կանխարգիլելու համար:



«Այս առնչութեամբ շատ կարեւոր է օրէնսդրական դաշտի առկայութիւնը: Պետք է ոչ միայն ճանչցուի ցեղասպանութիւնները այլեւ անոնց ժխտումը քրեօրէն պատժուի», - ըսած է ան՝ անցնելով, որ ցեղասպանագետները լուրջ աշխատանք ունին:

Նշենք, որ Օգոստոս 20-23 Պուլէնոս Այրեսի համալսարանի իրաւագիտութեան բաժանմունքին մէջ տեղի ունեցած է Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարեկիցին նուիրուած միջազգային գիտաժողով, որուն ընթացքին մասնակիցները խօսած են Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման անհրաժեշտութեան մասին, բարձրացուցած ցեղասպանութեան հետեւանքներու վերացման եւ ցեղասպանութեան ժխտումը քրեականացնող օրէնքներու անհրաժեշտութեան հարցը:

Հակառակ պաշտօնական Ստեփանակերտի՝ Սարսանգի ջրամբարէն միասնաբար օգտուելու կոչներուն. Մամետարովը կը բողոքէ

Ատրպէյճանի արտաքին գործոց նախարար Էլմար Մամետարովը երեքշաբթի՝ 25 Օգոստոս 2015-ին ընդունած է Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի զեկուցող, պոսնիացի խորհրդարանական Միլիցա Մարթովիչը, որ նախապէս Պաթու այցելած է «Ատրպէյճանի սահմանամերձ շրջաններու բնակիչները միտումնաւոր ջրագրկելու մասին» զեկուցումը նախապատրաստելու նպատակով:

Ատրպէյճանական contact.az լրատուական կայքի փոխանցումով՝ հանդիպումին ընթացքին նախարար Մամետարովը ուշադրութիւն հրաւիրած է այն հանգամանքին վրայ, որ սահմանամերձ գօտիի ատրպէյճանական բնակչութիւնը գրկուած է Լեռնային Ղարաբաղի մէջ գտնուող Սարսանգի ջրամբարէն օգտուելու կարելիութենէն:

«Հայերը թոյլ չեն տար օգտուելու ջուրէն», ըսած է ատրպէյճանցի նախարարը: Յիշեցնենք, որ պաշտօնական Ստեփանակերտը քանի մը անգամ պատրաստակամութիւն յայտնած է միասնաբար օգտագործելու Սարսանգի ջրամբարը. Պաթուն մինչդէռ չ'արձագանգեր:

Նախագահ Սարգսեան ընդունած է առաքելութիւնը աւարտող Ուքրանիոյ դեսպանը



Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեան երէկ ընդունած է Հայաստանի մէջ Ուքրանիոյ արտակարգ եւ լիազօր դեսպան Իվան Զուխթան, որուն դիւանագիտական առաքելութեան շրջանը կ'աւարտի:

Նախագահ Սերժ Սարգսեան շնորհակալութիւն յայտնած է դեսպան Զուխթային՝ պաշտօնավարութեան ընթացքին հայ-ուքրանական բարեկամութեան ամրապնդման գործին մէջ ունեցած ներդրումին եւ դիւանագիտական առաքելութիւնը պատշաճ կերպով իրականացնելու համար, կը յայտնէ նախագահի պաշտօնական կայքը:

Նախագահ Սարգսեան եւ Ուքրանիոյ դեսպանը համակարծիք եղած են, որ Հայաստանի մէջ յարգալից վերաբերմունք կայ ուքրանացի ժողովուրդին եւ Ուքրանիոյ

նկատմամբ: Իվան Զուխթան այդ առնչութեամբ գոհունակութեամբ փաստած է, որ նախապէս Հայաստանի մէջ ուքրանական համայնքին հետ հանդիպումին ընթացքին վերջնական զգացած է այդ ուշադրութիւնը եւ հոգատար վերաբերմունքը, որ տարիներ շարունակ կը ցուցաբերուի համայնքին նկատմամբ: Ան վստահեցուցած է, որ Ուքրանիոյ մէջ բնակուող բաւական աշխուժ հայ համայնքին նկատմամբ եւս նոյնպիսի վերաբերմունք կայ:

Չրուցակիցները յոյս յայտնած են, որ խաղաղութիւնը շուտով վերահաստատուի Ուքրանիոյ մէջ, ինչ որ նոր կարելիութիւններու դուռ պիտի բանայ նաեւ տնտեսական եւ այլ մարզերու մէջ հայ-ուքրանական մեծ ներուժը լիարժեքօրէն օգտագործելու համար:

«Հայերու Գարունը»՝ Հայոց Յեղասպանութեան նուիրուած France 3-ի պատրաստած վաւերագրական ժապաւենը

Ֆրանսական France 3 հեռուստաընկերութիւնը 55 վայրկեան տեւողութեամբ վաւերագրական ժապաւեն պատրաստած է հայերու եւ հայոց պատմութեան մասին՝ զայն վերնագրելով «Հայերու գարունը»:

Ըստ Nouvelles d'Armenie-ի՝ վաւերագրական ժապաւենի մուտքի հատուածին մէջ կը նշուի, որ մէկ միլիոնէն անցիլի հայերու կեանք խլած եւ հարիւր հազարներ բռնագաղթի ենթարկած Հայոց Յեղասպանութենէն արդէն անցած է հարիւր տարի: «Տարիներու ընթացքին իրենց հայրենիքէն հայերը արմատախիլ ընելը յանգեցուց տարատեսակ հայկական «սփիւռք»-ծեւաւորման: Թուրքիան պաշտօնապէս կը ժխտէ Հայոց Յեղասպանութիւնը՝ այն աստիճան հասնելով, որ նոյնիսկ կը փորձէ արհեստականօրէն «մաքրել» հայերու ներկայութեան հետքերը այդ տարածաշրջանին մէջ», - կը պատմուի ժապաւենին մէջ:



Այնուհետեւ կը ներկայացուի ֆրանսահայ Վարուժան Արթին, որ ժամանակին երգուած էր երբեք Թուրքիա ոտք չդնել, սակայն յետագային որոշեց իրեն համար բացայայտել իր նախնիներուն հողը: «Անոր համար ցնցող յայտնագործութիւն էին այն մեծաթիւ ծպտեալ հայերը, որոնք կրցած են վերապրիլ այս դարու առաջին մեծ Յեղասպանութիւնը եւ երբեք չեն լքած Թուրքիան», - կը նշուի ժապաւենին մէջ:

Աւարտին յիշենք, որ «Հայերու գարունը» ժապաւենը հեռարձակուեցաւ Օգոստոս 31-ին Փարիզի ժամանակով 23:25-ին:

Սեդա Չօպեան երբեք չկորսնցուց իր զուարթութիւնն ու հաղորդականութիւնը

Գրեց՝ Ռ. Յ.

Մարմարա թերթի հիմնադիր Սուրեն Շամլեանի դուստր, ապա անոր մահէն վերջ իր ամուսնին Պետրոս Չօպեանի հետ Մարմարայի արտօնատեր ու գլխավոր խմբագիր՝ Սեդա Չօպեան Չորեքշաբթի 26 Օգոստոսին, հողին յանձնուեցաւ Թորոնթոյի մէջ, 89 տարեկան հասակին մէջ: Յուզարկաւորութեան մասին այսօր մեր քովի սիւնակներուն մէջ հրատարակած ենք Թորոնթոյի մեր պատուակալ աշխատակից Յարութիւն Դերձակեանի թղթակցութիւնը:

Սեդա Չօպեան բացառիկ անհատականութեան տեր լրագրող ու խմբագիր էր: Ան կրցաւ մնալ արժանաւոր դուստրը իր հանգուցեալ հօրը, որ Պոլսահայ երբեմնի համայնքի բաւական փոթորկոտ օրերուն որոշած էր հիմնել նոր թերթ մը, «Մարմարա»ն, որ կարճ ժամանակի մէջ կրցաւ ամրացնել իր տեղը Հայ իրականութեան մէջ:

Սուրեն Շամլեան, որ նշանաւոր էր իր «Սուրճ» ծածկանունի տակ ստորագրուած տոմսերով ու թերթին մէջ պաշտպանուած տեսակետներով, արդէն անուանի լրագրող էր Մարմարան հիմնելէ առաջ, եւ կ'աշխատակցէր մինչեւ ամենէն հեռաւոր երկիրներու օտար թերթերուն: Բայց Մարմարայի հիմնարկութենէն վերջ այս թերթը անոր համար եղաւ ամեն բան, ինչպէս որ մահէն վերջ նոյնը պիտի պատահէր իր աղջկան ու փեսին Պետրոս ու Սեդա Չօպեանին համար:

Սեդա Չօպեանի գլխավոր յատկանիշն էր զուարթութիւնն ու լատեսութիւնը: Թերթը երբեմն կ'ապրէր տագնապներ, լարուած

մթնոլորտ, արդար ու ճիշդ պայքարներու ստեղծած դժուարութիւնները, բայց միշտ ալ կը վայելէր ընթերցողներու վստահութիւնն ու հաւանութիւնը: Այս բոլորին մէջ Սեդա Չօպեան երբեք իր դէմքէն չէր սրբեր ժպիտը, իր հոգեվիճակէն չէր սրբեր զուարթութիւնն ու կատակախօսութիւնը: Ընկերային հաղորդականութեամբ ան կը հաւասարակշռէր օրուան դժուարութիւններն ու ուրախութիւնները, ամէն օր փորձէր սրբագրութեանց հետեւանքով մատներուն վրայ նստած սեւ մեյլանը կը նկատէր իր աշխատանքին շքանշանը: Միշտ ալ եղաւ իր շատ սիրելի ամուսնին, Պետրոսին ետին թաքնուած անանուն զինւոր մը, որ ամէն կերպով կը զօրակցէր իր ամուսնին եւ կը դառնար անոր աջ բազուկը:

Մարմարա արդէն յաջողած էր իր երդիքին տակ հաւաքել իսթանպուլի հայ լաւագոյն գրողներն ու մտաւորականները եւ անոնց հետ ստեղծուած կապերը միայն մամուլի միասնութեան ու գործակցութեան կապեր չէին, այլ էին նաեւ ընկերային ու ընտանեկան մտերմութեան ու բարեկամական սիրոյ կապեր, եւ այս մեկտեղումին մէջ մեծ էր բնականաբար Սեդայի բաժինը:

Ընդհանրապէս թերթին սեւ աշխատանքն է որ ստանձնած էր Սեդա: Մինչ Պետրոս Չօպեան կը հրատարակէր ակնարկներ ու հրապարակագրական տեսակետներ, Սեդան կը կատարէր լուրերու կամ օտար գրագետներու կողմէ գրուած վէպերու ամբողջական թարգմանութիւնները, գրական շունչ ու ճաշակ ալ կը դնէր իր առօրեայ սեւ աշխատանքին վրայ: Լաւ անգլերէն գիտէր ու լաւագոյնս կ'օգտուէր իր այս ճանաչումէն:

ՍԵՂԱ ՉՕՊԵԱՆԻ ՅՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹԻՒՆԸ՝ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ

«Մարմարա» օրաթերթի հիմնադիր Սուրեն Շամլեանի դուստր, թերթին նախկին արտօնատեր ու խմբագիր, նորոգ հանգուցեալ Սեդա Չօպեանի յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի ունեցաւ 26 Օգոստոս 2015 Չորեքշաբթի օր, կէսօրուան ժամերուն Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մէջ:



Եկեղեցին լեցուն էր հայ եւ օտար սգակիրներով, որոնք եկած էին հանգուցեալին բարի յիշատակին առջեւ իրենց վերջին յարգանքը մատուցանելու:

Արարողութեան հանդիսապետեց եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Չարեհ Ա. Քհնյ. Չարգարեան, իր շուրջ ունենալով Բրշ. Գրիգոր Թոգաբեան եւ Նուրհան Իփէբեան սարկաւազները: Երգեցողութիւնները խիստ տպաւորիչ ու բացառիկ կերպով մեկնաբանուեցան Լենա Պէյլերեանի կողմէ, երգեհոնահարութեամբ Սօսա Արթիսեանի:

Յընթացք արարողութեան, ընտանիքի անունով Սեդա Չօպեանին թոռնուհին՝ Ամարա Փոսեան իր սրտի խօսքն ու յիշատակները փոխանցեց: Յաջորդաբար Տէր Չարեհը նախ անգլերէնով, հանգուցեալին կենսագրականը տուաւ, ապա կարգաւ Երկուշաբթի «Մարմարա» ի մէջ Սեդա Չօպեանի մահուան առթիւ հրատարակուած տխրունիի գրութիւնը, որուն վերջաւորութեան, խոր վշտակցութիւնները յայտնեց ընտանեկան պարագաներուն ու այլ մերձաւորներուն: Այնուհետեւ Տէր Հայրը փոխանցեց իր սրտի խօսքը, վեր առնելով հանգուցեալ Սեդա Չօպեանի արժանիքները:

Յաւարտ յուղարկաւորութեան արարողութեան հանգուցեալին մարմինը հողին յանձնուեցաւ Մաունթ Փլէզընթ Գերեզմանատունը ամփոփուելով ընտանեկան դամբարանին մէջ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴԵՐԱԿԵԱՆ

«Շոգեկառքի Հերոս» հայ դասախօսը իր առաջին հարցազրոյցը տուաւ

Ամերիկահայ դասախօս Մարք Մուղալեան, որ պայքարի բռնուած էր ֆրանսական շոգեկառքի վրայ յարձակած ահաբեկիչի հետ եւ վիրաւորուած էր կոկորդէն եւ ուսէն, իր առաջին հարցազրոյցը տուաւ «Փարի Մաչ»-ին հիւանդանոցի իր սենեակէն:



51-ամեայ Մուղալեան մանրամասնութիւններ պատմեց դէպքէն: Ըստ այդմ՝ Մուղալեան կը ճամբորդէր իր կնոջ՝ ֆրանսուհի Իզապել Բիսաշէրի հետ: Յարձակումէն առաջ ան նկատած է որ ահաբեկիչ Քազանի ինքզինք տարօրինակ կը պահէ ճեմիչի մօտ: Տեսած էր որ մարդ մը կը փորձէ պայքարիլ ահաբեկիչի հետ եւ օգնութեան հասած է անոր:

Մուղալեան յաջողած է ահաբեկիչի ձեռքէն խլել Քալաշնիքով ինքնաձիգ հրացանը: Չէնքը ի ձեռին, Մուղալեան այնուհետեւ վազած է դէպի իր կինը, սակայն ահաբեկիչը, որ այլ հրացան մը ունէր, թիկունքէն կրակած է Մուղալեանի վրայ:

Մուղալեան վիրաւոր վիճակի մէջ շատ արիւն կորսնցուցած է, իսկ ահաբեկիչը ետ առած է զէնքը: Այն ատեն դասախօսը մեռած ձեւացուցած է ինքզինք, որովհետեւ Քազանի կրնար դարձեալ կրակել:

Ներկայիս Մուղալեան կը շարունակէ դարմանուիլ հիւանդանոցի մէջ: Փամփուշտը խոցած է իր քներակը:

Հայաստանի մէջ կը բացուի Միջազգային Աստղագիտական Միութեան գրասենեակ

Միջազգային աստղագիտական միութեան Աստղագիտական գրագացման գրասենեակը, նոր համակարգման բաժիններ հիմնադրած է Հայաստանի, Զոլոմպիոյ, Յորդանանի, Նիկերիայի եւ Փորթուկալի մէջ:



Ըստ News.am-ի Միութեան կայքին վրայ նըշուած է, որ նոր երկիրներու հետ գործընկերութիւնը մաս կը կազմէ կազմակերպութեան տասնամեայ ռազմավարական ծրագիրին, որուն թիրախը աստղագիտութեան հասարակական շահի իրացումն է:

Համաձայնագիրը ստորագրուած է Հոնոլուլուի մէջ, կազմակերպութեան Ընդհանուր ժողովին ընթացքին:

Հինգ նոր գրասենեակները պիտի կատարեն երկու կարեւոր գործառնութիւն, շրջանային բաժանմունքները պիտի համակարգեն գործունէութիւնը՝ դրացի երկիրներուն մէջ աստղագիտութեան զարգացման ոլորտին, իսկ լեզուական փորձագիտական կեդրոնները պիտի զբաղին լեզուային եւ մշակութային կողմերով:

Հարաւարեւմտեան Ասիոյ շրջանային գրասենեակ պիտի բացուի Հայաստանի մէջ՝ Բիւրականի աստղագիտարանին կից:

Հայաստանի Բարձր Վարկանիշը Միջազգային Ցուցակի Վրայ. Իրականութի՞ն Թե՞ Տպաւորութիւն

«Զալիֆորնիա Զուրիեր»
(www.TheCaliforniaCourier.com) թերթի
հրատարակիչ եւ խմբագիր՝ Յարութ Սասունեան
կը գրէ:

Աշխարհի 152 երկիրներու «Մարդու ազատութեան ցուցանիշ»-ի վերջին զեկոյցին մէջ, Հայաստանին զարմանալիօրէն տրուած է բարձր վարկանիշ: Ուսումնասիրութիւնը համատեղ իրականացուած է Ուաշինկթընի Գաղտնի ուսումնարանի, Վանքովըրի Ֆրէյզըրի ուսումնարանի եւ Պեռլինի Ֆրիտրիխ Նաումանի անուան յանուն ազատութեան հիմնադրամին կողմէ: 108 էջերէ բաղկացած համապարփակ զեկոյցը երկիրները կը դասէ ըստ բաղաձայններու անհատական, բաղաձայնական եւ տնտեսական ազատութիւններու:

Դասակարգումը հիմնուած է 76 տարբեր ցուցանիշներու վրայ՝ խմբաւորուած 12 անուանակարգերու մէջ.

- օրէնքի գերակայութիւն,
- ապահովութիւն եւ անվտանգութիւն,
- շարժում,
- կրօն,
- միութիւն, հաւաք եւ քաղաքացիական հասարակութիւն,
- արտայայտութիւն,
- կառավարութեան մեծութիւնը,
- իրաւական համակարգ եւ սեփականութեան իրաւունք,
- դրամական միջոցներու մատչելիութիւն,
- միջազգային առեւտուրի ազատութիւն,
- վարկային, աշխատանքային եւ գործարար օրէնսդրութիւն:

Ըստ «Մարդու ազատութեան ցուցանիշ»-ին՝ աշխարհի տասը լաւագոյն երկիրներուն մէջ են Հոնկոնկը, Չուիցերիան, Ֆինլանտան, Դանիան, Նոր Չելանտան, Գանատան, Աւստրալիան, Իռլանտան, Անգլիան եւ Շուեդը: Միացեալ Նահանգները 20-րդ տեղն է:

Անցեալ շաբաթ հրապարակուած 2012 թուականի տուեալներուն համաձայն՝ Հայաստանը աշխարհի մէջ 53-րդն է, աւելի բարձր, քան անոր հարեւաններէն շատերը՝ Ատրալիան (126-րդ), Թուրքիան (62-րդ), Իրանը (152-րդ), եւ փոքր զիջում մը Վրաստանին (48-րդ):

Հայաստանի տպաւորիչ վարկանիշը կը բացայայտէ աւելի ապշեցուցիչ գնահատական, երբ կը նային այդ դասակարգման երկու հիմնական բաղադրիչներուն. Հայաստանը աշխարհի մէջ կը

զբաղեցնէ 17-րդ տեղը տնտեսական ազատութեան, եւ 70-րդը՝ անձի ազատութեան ցուցանիշներուն մէջ...

Հայաստանի վարկանիշը եւ «զարմանալի» որակեցի այն պատճառով, որ ժողովուրդի մեծ մասը հաւանաբար չէր ակնկալեր նման բարձր գնահատական, հաշուի առնելով ղեկավարութեան նկատմամբ մշտական քննադատութիւնը, ինչպէս երկրի մէջ, այնպէս ալ դուրսը: Թէեւ ճիշդ է, որ Հայաստանի կառավարութիւնը բազմաթիւ թերութիւններ ունի եւ արժանի է քննադատութեան, սակայն պետք է ընդունիլ, որ իշխանութիւնները կարգ մը բաներ ճիշդ ըրած են Հայաստանի համար, որ իր վարկանիշով «Մարդու ազատութեան ցուցանիշով» գերազանցած է այնպիսի ազդեցիկ երկիրներ, ինչպէս Արժանութիւնը, Պրագիլը, Չինաստանը, Եգիպտոսը, Հնդկաստանը, Իրանը, Քուէյթը, Մեքսիքոն, Գաթարը, Ռուսաստանը, Սեուտական Արաբիան, Թուրքիան, Ուրուգուայն եւ Վենեսուէլան:

Ժողովուրդին կողմէ Հայաստանի ընկալման եւ իրականութեան միջեւ առկայ այս հակասութեան հաւանական բացատրութիւնը այն է, որ Հայաստանի պաշտօնեաները վատ աշխատանք տարած են երկրի ձեռքբերումները գովազդելու համար: Հակառակ պարագային, շատ հայեր այսպիսի բացասական տպաւորութիւն չէին ունենար իրենց հայրենիքին մասին:

Այս միտքը պարզաբանելու համար վերցնենք Սինկափուրը, երկիր մը, որ յաջողութեամբ կը գովազդէ իր նուաճումները եւ բարձր կը գնահատուի ամբողջ աշխարհի մէջ իբրեւ լաւ կառավարման, արագ տնտեսական զարգացման եւ բարեկեցիկ կենսապայմաններու նախատիպ: Հակառակ անոր, որ կասկածէ վեր է, որ այս «ասիական վագրը» ձեռքբերումներու տպաւորիչ ցուցանիշ սահմանած է, սակայն զարմանալի է, որ Սինկափուրը վարկանիշային ցուցանիշով աշխարհի մէջ կը զբաղեցնէ 43-րդ տեղը՝ ընդամենը 10 նիշով առաջ անցնելով Հայաստանէն «Մարդու ազատութեան ցուցանիշ»-ով: Եթէ ուշադրութիւն դարձնենք Սինկափուրի շուրջ ստեղծուած աղմուկին, կարելի էր ենթադրել, որ այդ երկիրը պետք է տեղ զբաղեցնէր լաւագոյն տասնեակին մէջ, իսկ Հայաստանը ըլլար 100-րդը, հաշուի առնելով վերջինսիս հասցէին մշտապէս ինչո՞ղ քննադատութիւնը:

Ինչպէս կ'ըսեն «տպաւորութիւնը իրականութիւն է»: Ըստ էութեան, տպաւորութիւնը շատ աւելի կարեւոր է, քան իրականութիւնը, քանի որ

մարդիկ ամէն ինչի մասին կը դատեն իրենց սեփական տպաւորութիւններուն հիման վրայ, անկախ անկէ, թէ անոնք որքան կը տարբերին իրականութենէն: Օրինակ, վերջին տարիներուն Հայաստանը շարք մը միջազգային զեկոյցներու մէջ զբաղեցուցած է շատ բարձր տեղեր, քան կը սպասուէր: Սակայն, Հայաստանի կառավարութիւնը երբեք չէ գովազդած այս կարեւոր վարկանիշը, ատով իսկ ծախողելով երկրի համար դրական երեւոյթին ստեղծումը, որ կրնար գրաւիչ ըլլալ օտարերկրեայ զբօսաշրջիկներու եւ ներդրողներու համար:

Յետաքրքրական է, որ Հայաստանէն շատ աւելի բարեկեցիկ երկիրներ ետ մնացած են «Մարդու ազատութեան ցուցանիշ»-ին մէջ, որ կրնայ նշանակել, որ երկրի հարստութիւնը, Ատրալիանի պարագային՝ քարիւղի բազմամիլիարանոց եկամուտները, բարեկեցութիւն կամ ազատութիւն չեն երաշխաւորեր իրենց քաղաքացիներու համար...

Սակայն, հաշուի առնելով Հայաստանի համեմատաբար բարձր վարկանիշը, անոր ղեկավարութիւնը այլեւս չի կրնար արդարաւայ, թէ երկրի զարգացումը կը կաղայ նիւթական եւ բնական պաշարներու սահմանափակութեան պատճառով: Ամէն ինչ կախուած չէ փողէն: Քանի որ Հայաստանը տնտեսական ազատութեան ցուցանիշով կը զբաղեցնէ 17-րդ տեղը, ուստի արդարացում չի կրնար ըլլալ անձի ազատութեան ցուցանիշով 70-րդ տեղը զբաղեցնելու համար: Վերջին ցուցանիշը կրնայ մեծապէս բարելաւուիլ պետութեան կողմէ առանց մէկ դրամ ծախսելու: Միայն անհրաժեշտ են հոգատար պետական պաշտօնեաներ, որոնք յանձնառու պիտի ըլլան բարելաւելու ժողովուրդի բարեկեցութիւնը:

Հայաստանի ղեկավարութեան ամենամեծ բացը ոչ թէ նիւթական միջոցներու, այլ հասարակութեան վստահութեան պակասն է: Իշխանութիւնները կրնան վերականգնել քաղաքացիներու վստահութիւնը ջանադրաբար աշխատելով, որպէսզի կարողանան բարելաւել անոնց կենսապայմանները, եւ միայն անկէ յետոյ հասարակութեան դրական ընկալումը պիտի համապատասխանէ Հայաստանի համաշխարհային վարկանիշի իրականութեան:

**Թարգմանութիւնը կատարեց
Ռուկաննա Աւագեան
Արեւմտահայերէնի վերածեց ԵՌԱԳՈՅԼ-ը**

Հայ Առաքելական Եկեղեցին կը զգուշանայ իսլամացած հայեր մկրտելէ՝ երկու հիմնական պատճառով

News.am կը հաղորդէ, որ վերջին հանգրուանին Հայաստանի մէջ իսլամացած հայերու մկրտութեան հարցին վերաբերող թեր ու դեմ բազմաթիւ կարծիքներ արտայայտուեցան եւ կեցուածքներ դրսեւորուեցան: Իւրաքանչիւր կողմ առաջադրեց իր տեսակետն ու մօտեցումները: Այս հարցին առնչութեամբ 20 Օգոստոսին լրագրողներուն հետ ունեցած զրոյցին ընթացքին Կոմիտաս վրդ. Յովնանեան յայտնած է, որ իսլամացած հայերը Հայ Առաքելական Եկեղեցին չի մկրտեր 2 կարեւոր պատճառով՝ անոնցմէ շատեր մկրտութեան վկայական ստանալէ ետք կ'երթան Եւրոպա ու կը շարունակեն մզկիթ երթալ, նաեւ կայ մտավախութիւն, որ անոնք թրքական յատուկ ծառայութիւններուն կողմէ գործուղուած մարդիկ ըլլան եւ միջամուխ ըլլան համայնքին հարցերուն:



«80-ականներուն մենք կ'ըսեինք՝ եթէ հայ է, ինչո՞ւ չմկրտենք, ինչո՞ւ անոր օգտակար չըլլանք, բայց տեսանք, որ մկրտողներուն մեծամասնութիւնը ոչ թէ քրտախօս հայեր են, այլ քիւրտեր են», ըսած է Կոմիտաս վարդապետ՝ աւելցնելով, որ անոնցմէ շատեր իրենց մկրտութեան վկայականը կ'օգտագործեն եւրոպական երկիրներ երթալու, իբրեւ հայ քրիստոնեայ կեցութեան արտօնութիւն առնելու, սակայն անկէ ետք մզկիթ կը

Շար. էջ 13

Լիբանանի մէջ՝ զինեալ բուռն բախումներ

Լիբանանի մէջ պաղեստինեան Այն Յելուէ գաղթականին մէջ երկուշաբթի՝ 24 Օգոստոս 2015-ի ուշ գիշերին բուռն բախումներ ծայր առած են Ֆաթիի եւ ծայրայեղ իսլամականներուն միջեւ: Բախումները հետզհետէ աւելի բուռն դարձած են, երբ առաջին անգամ ըլլալով օգտագործուած են հրասանդեր եւ հրթիռներ:



Չինեալ բախումները պատճառած են երկու զոհ, որոնք են՝ Ֆաթիի անդամ Ֆատի Խտէյր եւ Ժուստ Շամի անդամ Հայսամ Շաապի եւ 15 վիրաւորներ, իսկ գաղթականէն դուրս՝ դէպի աւելի ապահով շրջաններ հեռացած են մեծ թիւով ընտանիքներ: Երեկոյեան ժամը 11:30-ին Սայտայի մզկիթները եւ քաղաքապետարանը իրենց դռները բացած են՝ հիւրընկալելու համար գաղթականէն փախուստ տուած անպատասպար քաղաքացիները:

Ապահովութեան ուժերն ու բանակը, որոնք կոչ ուղղած էին քաղաքացիներուն հեռու մնալու Այն Յելուէն շրջափակող ժամբաները օգտագործելէ՝ անոնց ապահովութեան համար, գիշերուան ժամը 11:00-ին Աուալիի եւ Չահրանիի կամուրջներուն ուղղութիւնները փոխած են դէպի Սայտա:

Չինեալ բախումներուն ընթացքին օգտագործուած հրթիռներէն մէկը թիրախ դարձուցած է նաեւ Սայտայի սերայը:

Ֆաթիի խոստացած է վերջ տալ գաղթականին մէջ բոյն դրած ծայրայեղ իսլամականներուն գոյութեան:

ABAKA

SECTION FRANÇAISE

LUNDI 7 SEPTEMBRE 2015

Bénédition du Saint-Chrême à Etchmiadzine

Les préparatifs à la bénédiction du Saint-Chrême ont lieu à Etchmiadzine et commencent 40 jours avant l'évènement. Pour cela, le chaudron argent rempli d'huile a été posé sur le maître-autel de la cathédrale et recouvert d'une couverture.

C'est dans la cathédrale d'Etchmiadzine qu'a lieu la bénédiction du Saint-Chrême, la précieuse huile sainte à la composition savante, utilisée lors des baptêmes arméniens. Présidée par le Catholicos en personne, assisté de ses prélats, cette cérémonie, sans doute la plus impressionnante sous les fresques dorées de la coupole de la cathédrale d'Etchmiadzine, n'a lieu que tous les 7 ans. Après celle de 2015, il faudra donc

attendre 2022 pour y assister...

Selon le Frère Zakaria Baghumian, responsable du Saint-Chrême, chaque jour, après le service du soir, une prière suit la bénédiction de l'huile. Le Fr. Zakaria Baghumian a promis de publier tous les jours des informations sur sa page Facebook. « Je pense que ce sera intéressant et bénéfique pour nos esprits et nos âmes. Donc, nous allons avoir une connaissance spirituelle durant 40 jours afin de nous préparer à la Bénédiction du Saint-Chrême. »

Depuis le premier Catholicos de Tous les Arméniens, Saint-Grégoire l'Illuminateur, le droit de bénir le Saint-Chrême (Mouron) est réservé

Suite à la page 8

Le Premier ministre canadien rencontre des réfugiés



Lors d'un arrêt dans sa campagne électorale, le 10 août dernier, à l'église copte Saint-Marc de Markham, près de Toronto, le premier ministre canadien Stephan Harper a rencontré en privé une famille de réfugiés arméno-syriens nouvellement arrivée.

Levon Danayan, sa femme Mayda Moumjian et leurs deux enfants, Araz et Kevork, arrivés au Canada le 24 juin dernier, ont rencontré M. Harper, son épouse Laureen et leurs enfants Benjamin et Rachel avant l'annonce faite par le premier ministre selon laquelle une réélection d'un gouvernement conservateur offrirait un nouveau programme de trois ans, et 9 millions de dollars afin de soutenir les minorités religieuses persécutées du Moyen-Orient. Le plan de M. Harper comprend une aide aux réfugiés irakiens et syriens, qui continuent à faire face à la persécution religieuse et au génocide. Le plan comprend un engagement à accepter 10 000 réfugiés de la région au cours des quatre prochaines années.

Lors de sa rencontre avec le Premier ministre du Canada, Danayan a présenté une grande carte de remerciements au nom des quelques 100 réfugiés arméniens de Syrie et d'Irak qui ont exprimé leur « profonde gratitude » envers le programme de parrainage privé du gouvernement du Canada.

Au cours de la réunion, le premier ministre a fait preuve de son grand intérêt pour le sort des minorités religieuses persécutées dans la région et la dévastation à laquelle ils sont confrontés par l'EI.

Commentant la réunion, Vatché Demirdjian, président de l'Association arménienne conservatrice canadienne, a déclaré : « Une fois de plus notre gouvernement, sous la direction du Premier ministre, a maintenu les traditions et les convictions canadiennes et a démontré que le Canada est un symbole d'espoir pour les minorités persécutées dans le monde, et la communauté internationale considère le Canada comme le champion des droits de l'homme et un défenseur des personnes vulnérables. »

Arméniens : 1915, Yézidis : 2015

Editorial écrit en anglais par Edmond Y. Azadian et publié dans The Armenian Mirror-Spectator en date du 22 août 2015

Cent ans se sont écoulés depuis qu'une nation entière a été déracinée de ses terres ancestrales, exterminée et/ou dispersée dans le monde entier, mais le monde n'a rien appris. La même brutalité, la même campagne vicieuse menée contre les Arméniens, est aujourd'hui menée contre les Yézidis en Irak. Le Pape François a accusé d'indifférence le monde qui a encouragé les auteurs de ces crimes, il y a un siècle. Aujourd'hui, sommes-nous surpris que les Yézidis rencontrent cette même indifférence alors qu'ils en ont besoin ? Au mieux, un mot du bout des lèvres est émis par les puissances qui pourraient mettre fin à ces atrocités si elles le voulaient vraiment.

Les mêmes esprits criminels et les mains sanglantes qui ont exterminé 1,5 million d'Arméniens en 1915 sont en action aujourd'hui, en l'an 2015, voulant la destruction et la dispersion de la minorité yézidie d'Irak. Des décapitations sont commises par l'État islamique (EI) mais les principaux coupables sont les dirigeants turcs qui ont aidé à créer le groupe terroriste, l'ont formé et l'ont armé ouvertement, l'EI est une force du mal qui répand le chaos pour faciliter les desseins politiques d'Ankara sur le contrôle du Moyen-Orient.

Les dirigeants turcs ont utilisé l'EI afin de détruire la vie arménienne florissante de Kessab en Syrie, de profaner le mémorial au génocide de Der Zor et de menacer la communauté arménienne très organisée d'Alep. Il se joue dans la région, une mascarade politique au détriment des populations pacifiques. Elle défie toute logique alors que les forces américaines toutes-puissantes capables de pulvériser l'armée organisée d'Irak en seulement quelques jours ne peut contenir l'armée hétéroclite de l'EI, qui occupe déjà une bande de territoire aussi grande que la Grande-Bretagne, à cheval sur l'Irak et la Syrie.

Les Etats-Unis n'ont cessé de cajoler le gouvernement turc pour qu'il affronte sérieusement l'EI et permette aux avions de guerre américains d'utiliser la base aérienne d'Incirlik, mais Ankara se traîne les pieds.

Lorsque Washington a mollement consenti à permettre à la Turquie d'établir une zone d'exclusion aérienne en Syrie, Ankara a cédé. Elle a feint de se joindre aux Etats-Unis et ses alliés afin de combattre l'EI, alors qu'en réalité, elle a commencé à combattre ses ennemis kurdes, qui pourtant sont également les seuls combattants qui font face avec succès à l'EI. L'idée d'une zone d'exclusion aérienne est le plan de la Turquie afin d'amputer le territoire de la Syrie. Déjà, les puissances coloniales françaises avaient cédé à la Turquie en 1938 la région de Hatay en Syrie, principalement peu-

plée d'Arabes et d'Arméniens, comme elles ont aussi donné la Cilicie, laissant la population civile arménienne aux mains des forces kémalistes. La Syrie n'a jamais accepté la perte de Hatay.

La semaine dernière, lors d'une entrevue exclusive accordée à la BBC, le Premier ministre Ahmet Davutoglu, en colère, a blâmé les sources d'information qui ont révélé la vérité - que la Turquie tenait son propre ordre du jour dans sa lutte contre les Kurdes, et sous prétexte de combattre l'EI. Les journalistes ont révélé qu'à la date de l'entrevue, la Turquie avait effectué 400 frappes aériennes contre les forces kurdes dans les montagnes de Kandil en Irak, et un seul raid contre l'EI. Bien sûr, ces tergiversations permettent à l'EI de poursuivre son carnage. Alors que le viol et l'assassinat de femmes Yézidis se déroulaient sans relâche, seul le sort de l'otage américain a secoué la conscience de l'opinion publique américaine. En effet, Kayla Mueller avait été utilisée comme esclave sexuelle par Abou Bakr, le soi-disant calife de la nation islamique, avant d'être assassiné.

Le Wall Street Journal, dans son édition du 14 août, a mis en lumière les horribles atrocités commises contre les Yézidis : « L'EI a une structure organisée élaborée pour son commerce d'esclaves sexuelles, tout comme il a développé une infrastructure de services de base dans les territoires qu'il revendique. Le New York Times a rapporté que l'EI avait prévu de créer un marché du sexe avant son attaque contre les Yézidis irakiens sur le Mont Sinjar, en août dernier. L'EI considère que l'utilisation et les abus sexuels contre les femmes Yézidis sont des actes permis par l'Islam parce que ces femmes sont « infidèles. »

Exactement la même logique a été utilisée par le gouvernement turc, il y a 100 ans pour violer des femmes arméniennes et confisquer les propriétés arméniennes.

Le Wall Street Journal poursuit, dans ce même article, « Et alors que de nombreux pays ont dénoncé l'EI et ses décapitations, ses exécutions de masse et autres actes horribles, peu d'efforts ont été consacrés afin de sauver ces femmes prises comme esclaves sexuelles. »

Les raids aériens des Etats-Unis et les raids aériens simulés de la Turquie n'ont fait aucune brèche sur la détermination de l'EI à occuper le territoire. Seule la très dure lutte des Pesh Mergas kurdes a donné des résultats, et l'EI a été contraint d'évacuer des territoires en Irak. Ce que les Yézidis découvrent dans ces territoires reconquis sont des charniers, similaires à ceux qui existent encore à ce jour dans les sables du désert de Der Zor.

La vie est trop dangereuse pour les Yézidis et les Chrétiens d'Irak tandis que les forces de l'EI sont en fuite. Ils ont décidé de se réfugier dans d'autres pays. Certaines familles se sont installées en Arménie, où une communauté

Suite à la page 8

La salle « Ancienne Turquie » du British Museum renommée « Anatolie et Ourartou »

La salle « Ancienne Turquie » du British Museum de Londres a été renommée en « Anatolie et Ourartou » selon Armenpress qui cite l'un des initiateurs, Zapyur Batikian.

La salle d'exposition « Ancienne Turquie » du British Museum porte désormais l'inscription « Anatolie et Ourartou ». L'information vient de Zapyur Batikian, la représentante de Aid Armenia International

qui l'annonce sur sa page Facebook. Zapyur Batikian affirme que pour faire plier les responsables du musée britannique, elle a mis en place une pétition qui a réuni 12 000 signatures en faveur du changement de nom de la salle.

« Bien évidemment j'aurais désiré qu'il renomme cet espace « Arménie » ou « le plateau arménien », mais ce geste rétablit toutefois une partie de la vérité » a ajouté Z. Batikian. Elle a remercié également l'ambassadrice d'Arménie en Grande-Bretagne Kariné Ghazinian récemment disparue, ainsi que le ministre arménien de la Culture, et les historiens arméniens et britanniques qui se sont investis dans la réalisation de ce projet.

Le British Museum a été créé en 1753. Il est le principal musée archéologique de Grande-Bretagne et de l'Empire britannique. Il est le deuxième musée le plus populaire dans le monde, après le Louvre.



Bénédition du Saint-Chrême...

Suite de la page 7



exclusivement au Catholicos. Grâce à la bénédiction du Saint-Chrême par le Catholicos arménien, toutes les actions de Dieu sont bénies, ainsi le Saint-Esprit redonne vie à l'huile, et la transforme en une fontaine de toutes les grâces accordées de Dieu. Et sous le tintement joyeux des cloches symbolisant la descente de l'Esprit Saint, l'ancien chrême est mélangé au nouveau, comme le veut la tradition de notre Église. Les ingrédients pour le Saint-Chrême symbolisent la perfection des vertus dont la plénitude et l'unité sacramentelle est le principal élément du Seigneur Jésus Christ.

Le principal élément du Saint-Chrême est l'huile d'olive vierge pure, à laquelle sont combinés le baumier et

40 sortes d'encens parfumé, fleurs, plantes aromatiques douces, racines et extraits de fleurs, ainsi que différents extraits de pétrole et de feuilles.

Les doses retenues sont concassées, broyées et mélangées avec de l'huile d'olive, le vin blanc, l'eau, et d'autres essences florales de rose par les membres de la Confrérie de la Sainte-Etchmiadzine, avec leurs prières et de l'encens.

Le Catholicos bénit tous les ingrédients pour le Saint-Chrême. Quarante jours avant la bénédiction du Saint-Chrême, le chaudron couvert est placé sur le maître-autel de la cathédrale, afin qu'il puisse recevoir les prières, les psaumes et les hymnes quotidiens à la vie.

La baronne Caroline Cox au Karabagh



La Baronne Caroline Cox, membre de la Chambre des Lords du Parlement britannique a effectué une nouvelle visite dans le Haut-Karabagh, à la tête d'une délégation britannique, qui a été reçue par le président Bako Sahakian et d'autres personnalités locales.

Le 17 août, Mme Cox et sa délégation se sont rendues à Berdzor, où elles ont rencontré Artur Mkhitarian et Hakob Sayamian, représentants de l'administration régionale de Kashatagh, ainsi que Davit Davtian.

Le président Sahakian a reçu Mme Cox le 20 août et a tenu à saluer, durant l'entretien, la loyauté envers le Haut-Karabagh de la parlementaire britannique, dont on ne compte plus les visites dans la région, en se félicitant de la composition, toujours plus importante, des délégations qui l'accompagnent.

Le président Sahakian a rappelé toute l'importance qu'il accordait aux visites de ces délégations, venues s'informer de la situation sur le terrain au Karabagh et désireuses d'entretenir des relations amicales entre les peuples.

Arméniens : 1915,...

Suite de la page 7

Yézidie florissante existe depuis des décennies.

Les Yézidis sont moins d'un million dans le monde, et seraient issus d'un groupe ethnique Kurde (même si eux-mêmes sont en désaccord) et pratiquent une religion particulière, un mélange de pré-christianisme, soufi, musulmane et diverses traditions monothéistes. On estime que 40 à 50 millions de Kurdes vivent en Irak, Iran, Syrie et Turquie. Les deux communautés ont été victimes de persécution dans ces pays et à l'extérieur, au gré de politiques changeantes. Le seul endroit où les Kurdes et les Yézidis ont trouvé refuge a été l'Arménie. Même pendant la période soviétique, ils ont pu développer leur culture à travers des publications et la radiodiffusion.

La communauté Yézidie en Arménie est forte de 40 000 personnes, soit 1,3% de la population du pays.

Le président de l'Union Mondiale des Yézidis, Aziz Tamoyan, a récemment déclaré lors d'une conférence de presse à Erévan, qu'il était reconnaissant envers le Président Serge Sargissian et les hauts-fonctionnaires d'Arménie qui ont soulevé, depuis plus d'un an, la question du génocide Yézidi dans le nord de l'Irak.

« Seul le président d'Arménie nous a soutenus. Il a parlé devant les organisations internationales et a soulevé la question des Yézidis.

Il y a déjà un an que les Yézidis du

nord de l'Irak subissent un génocide, mais la communauté internationale et les puissances mondiales n'ont entrepris aucune démarche, » a ajouté Tamoyan.

Nous pourrions élever notre tragédie au niveau de la douleur universelle et avoir de l'empathie pour les autres victimes de génocide.

Certains Arméniens et Juifs, en deuil de leur passé tragique, sont devenus introvertis et insensibles à la douleur des autres, et recourent à des comparaisons sur la douleur plus importante que celle de l'autre, ou des martyrs plus précieux que d'autres. Cependant, si nous ne nous soucions pas des tragédies des autres groupes ethniques, pourquoi devraient-ils embrasser et sympathiser avec notre douleur?

Dans le cas des Yézidis, les Arméniens sont sortis de leur coquille pour embrasser un autre groupe à l'agonie.

Incidemment, les Yézidis ont jeté les bases d'un imposant temple à Aknalich, en Arménie.

La nature humaine ne change pas. Cent ans plus tard, les Turcs sont les mêmes Turcs qui ont perpétré des atrocités de masse, mais cette fois avec des armes plus modernes.

Si le destin des nations les plus faibles est de devenir victimes des jeux politiques, la communauté internationale ne peut se consoler, car en 2015, un autre génocide ne sera pas évité.

Traduction N.P.

ABAKA

ENGLISH SECTION

MONDAY SEPTEMBER 7, 2015

Armenia's Colorless 'Revolution'

By Edmond Y. Azadian

